ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2021 թվականի
փետրվարի 11-ին

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» 1998 թվականի հունիսի 16-ի ՀՕ-23 օրենքում (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1-ին հոդված.

«**Հոդված 13.1.**

1. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից օրենքով սահմանված կարգով հաշվարկված հարկերի գումարը Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից կամ պետության ստեղծած հիմնադրամից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը կնքված վարկային (փոխառության) պայմանագրերի հիման վրա ստացված ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և դրանց սպասարկման համար վճարված տոկոսների փոխհատուցման նպատակով վերադարձվում է կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից տվյալ եռամսյակի կամ տվյալ կիսամյակի համար հաշվարկված հարկերի հանրագումարի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վարկի (փոխառության) և դրա սպասարկման համար վճարված տոկոսների գումարը՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումները:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները՝

1) չեն տարածվում վարկային կազմակերպությունների, բանկերի, գրավատների, բնական գազի ներկրման, փոխադրման, բաշխման և գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման, էլեկտրական էներգիայի ներկրման, հաղորդման, բաշխման և արտահանման, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության (վերամշակման) լիցենզավորված գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վրա.

2) տարածվում են սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված հետևյալ հարկատեսակների վրա՝

ա. շահութահարկ,

բ. եկամտային հարկ,

գ. ակցիզային հարկ,

դ. ավելացված արժեքի հարկ,

ե. հաստատագրված վճարներ,

զ. առևտրի հարկ:

3. Սույն հոդվածով նախատեսված գումարները՝

1) վարկային (փոխառության) պայմանագրի համաձայն՝ ամսական կամ եռամսյակային վճարումներ կատարող կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ենթակա են վերադարձման եռամսյակային, վարկային (փոխառության) պայմանագրի համաձայն կիսամյակային վճարումներ կատարող կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին, ինչպես նաև կիսամյակային հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող անհատ ձեռնարկատերերին՝ կիսամյակային պարբերականությամբ.

2) կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ենթակա են վերադարձման, եթե կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերն ամբողջությամբ կատարել է տվյալ եռամսյակի կամ տվյալ կիսամյակի համար սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշված հարկատեսակների գծով հարկային պարտավորությունները:

4. Սույն հոդվածով նախատեսված գումարներից վերադարձման ենթակա գումարների առավելագույն չափերը որոշելիս հաշվետու տարվա եռամսյակները և կիսամյակները դիտարկվում են առանձին-առանձին:

5. Եթե սույն հոդվածով նախատեսված գումարները վերադարձնելուց հետո սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշված հարկատեսակներից որևէ մեկի կամ մի քանիսի մասով հարկային մարմին է ներկայացվում ճշտված հաշվարկ, կամ ստուգման արդյունքում կամ դատարանի որոշման հիման վրա փոխվում է հարկային մարմին ներկայացված հաշվարկներով հայտարարագրված հարկային պարտավորությունը, որի արդյունքում՝

1) համապատասխան եռամսյակի կամ կիսամյակի համար կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից հարկային մարմին ներկայացված հաշվարկներով նախկինում հայտարարագրված հարկերի պարտավորությունը

նվազում է կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը վերադարձված հարկերի գումարից, ապա փաստացի վերադարձված և ճշտված հարկերի գումարի տարբերության չափով հարկերի վերադարձման օրվա դրությամբ կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջն առաջադրվում է տվյալ հարկատեսակի գծով պարտավորություն.

2) համապատասխան եռամսյակի կամ կիսամյակի համար կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից հարկային մարմին ներկայացված հաշվարկներով նախկինում հայտարարագրված հարկերի պարտավորությունն ավելանում է, ապա կատարվում է սույն հոդվածի համաձայն հարկերի վերադարձվող գումարի առավելագույն չափի վերահաշվարկ:

6. Սույն հոդվածով նախատեսված՝ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին հարկի գումարների վերադարձման կարգը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 20.2-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում «ժգ» բառից առաջ լրացնել «գ.1», բառը:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Օրենքի 13.1-ին հոդվածի դրույթները գործում են մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021 թ. փետրվարի 19
Ստեփանակերտ
ՀՕ-24-Ն